ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

1111/ 4721-18
05.12.2018թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Խաչատրյան,**

Կից ներկայացնում ենք Եվրոպական միության պատվիրակությունից ստացված Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև «EuforCitizens: Deepening Democracy in Armenia» ֆինանսավորման համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) Եվրոպական հանձնաժողովի կողմից միակողմանի ստորագրված երեք բնօրինակները:

Տեղեկացնում ենք, որ Նախագծի երկկողմանի ստորագրված երկու բնօրինակները պետք է Եվրոպական միության պատվիրակություն ներկայացնել մինչև ս.թ. դեկտեմբերի 7-ը:

Հիմք ընդունելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույքները՝ կից ներկայացնում ենք նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության եզրակացությունը՝ Նախագծի ստորագրման արտաքին քաղաքական նպատակահարմարության և Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականությանը և ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանության մասին:

Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծի վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

Նախագծի բնօրինակները կառաքվեն սուրհանդակային ծառայության միջոցով:

Առդիր՝ 2 թերթ:

????? ????????
Dec 5 2018 5:12 PM

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ** **ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ**

*Կատարող՝ Անի Ամիրյան*
*Հեռ: 060 620 421*

Կառավարական տուն 2, Վազգեն Սարգսյան 3, Երևան 0010: Հեռ. +374 60 620000, Ֆաքս +374 60 620062
Government House 2, 3 Vazgen Sargsyan str., 0010 Yerevan, Tel: +374 60 620000, Fax: +374 60 620062, E-mail: info@mfa.am
www.mfa.am

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «EU FOR CITIZENS: DEEPENING DEMOCRACY IN ARMENIA» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական միության միջև կնքվելիք «EuforCitizens: Deepening Democracy in Armenia» ֆինանսավորման համաձայնագրի նախագծով (այսուհետ՝ Համաձայնագիր) նախատեսվում է ֆինանսական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որն ուղղվելու է արդար և թափանցիկ ընտրական գործընթացների կազմակերպմանը, մարդու իրավունքների ապահովմանը՝ մասնավորապես, ամրապնդելու կանանց ներգրավվածությունը քաղաքացիական գործընթացներում, մեդիա ոլորտի զարգացմանը և կառավարման գործընթացներին քաղաքացիների մասնակցության ապահովմանը: Համաձայնագրով սահմանված գործողության ընդհանուր արժեքը կազմում է 8.040.000 եվրո: Եվրոպական միությունը սեփական միջոցներից գործողության իրականացմանն ուղղելու է 7.500.000 եվրո, իսկ գործողության մնացած մասը համաֆինանսավելու է Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Շվեդիայի կողմից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով վերոնշյալ գործողության հիմնական նպատակները՝ գտնում ենք, որ Համաձայնագիրը համապատասխանում է ՀՀ վարած արտաքին քաղաքականությանը և ստանձնած միջազգային պարտավորություններին և վերջինիս ստորագրումը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

????? ?????????
Dec 6 2018 4:33 PM

ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ